

«ՀՈԳՍԸ ԾՈՎ Է, ԼՈՒԾՈՂՆ Ո՞Վ Է...»

ՆԱՄԱԿՆԵՐԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԸ

«Հոգսը ծով է, լուծողն ո՞վ է» խոսքով Ոգին նամակների մի փունջ է տվել ինձ՝ այսպես ասած մեկնաբանելու համար:

Կարդում եմ ու ինչպես արեւմտահայերն են զարմանում՝ մնում ավիիբերան: Որքան միամիտ են մեր ընթերցողները եւ որքան դյուրահավատ: Նրանց թվում է թե, եթե վերակառուցում ու հրապարակայնություն է երկրում, ուրեմն ամեն հարց կարելի է լուծել: Չէ, ինձ սխալ չհասկանաք, ես կողմ եմ եւ համոզված, որ ժողովրդական տնտեսության, գիտության, մշակույթի եւ մնացած բոլոր բնագավառներում մենք վիթխարի հաջողությունների կհասնենք եւ մեր աչքերով կտեսնենք նույնիսկ սովետա-ամերիկյան տիեզերագնացների համատեղ թռիչքը դեպի Մարս: Այո՛: Բայց որ շրջավերակ շատ աշխատողներ բարեհամբույր կդառնան, չեմ հավատում: Բայց որ վաճառողը չի կոպտի գնորդին՝ թույլ տվեք կասկածել: Որովհետեւ մենք մեծ հարցեր լուծող ենք, խոշոր, գյուղական հարցեր: Իսկ մանրի մասին ամոթ էլ է խոսելը: Մանր... մանր դրամ... Հիմա ո՞վ է մանր դրամ պահանջում: Շատ են ամաչում:

Բայց ահա մարդիկ կան, որ չեն «ամաչում»: Երեւանի Սարյան փողոցի թիվ 12 շենքի բնակիչներն այնքան են «մանրացել», որ բողոքում են, թե խմելու ջուր չունեն: Այսինքն խողովակներ ու ծորակներ ունեն, բայց ջուր չի գալիս: Նույնիսկ՝ գրաֆիկով: Իսկ, եթե գալիս է, երբեմն՝ միայն տապկնոցիի նման, ճիշտ այն ժամանակ, երբ մարդիկ կամ քնած են, կամ տանը չեն: Հետո՞: Դա ի՞նչ հարց է: Բայց եկեք ու տեսեք, որ ավելի «մանր» հարցեր էլ կան:

Երեւանի 15-րդ թաղամասի թիվ 50 շենքի բնակիչները, տնային լիազոր Ս. Հակոբյանի գլխավորությամբ, աղմուկ են բարձրացրել, թե թաղամասի հինգհարկանի ու բարձրահարկ շենքերը, թիվ 2 մանկապարտեզն ու միջնակարգ դպրոցը ամիսներ շարունակ զրկված են տաք ջրից եւ ջեռուցումից: Թե իբր կաթսայատան ուժը չի բավականացնում: Չի կարելի չէ՛, ընկերներ: Եթե կաթսայատան ուժը չբավականացնեք, մի թե այն հզորացնելու փոխարեն Մաշտոցի շրջավերակ գործկումը կաթսայատան շենքի կեսը կհատկացնեք մասնավոր կոոպերատիվի, որպեսզի այնտեղ ակվարիումներ սարքեն եւ ձկներ աճեցնեն: Եւ վերջապես ի՞նչ վատ բան է ակվարիումը: Մի թե չի կարելի երբեմն-երբեմն երեխաներին ակվարիումների մեջ լողացնել:

Երեւանի Թումանյան փողոցի թիվ 5 տան բնակիչներն էլ, Արամ Ֆրանգուլյանի գլխավորությամբ, տրտնջում են, թե ապրում են քաղաքի ուղիղ կենտրոնում եւ զուգարան չունեն: Նրանց նույնիսկ չի միխթարում այն հանգամանքը, որ իրենց փոխարեն ուրիշներն ունեն: Չի կարելի այդքան եսասեր լինել, չէ՞: Լավն էլ պետք է տեսնել:

Զարմանալիորեն լավը չեն ուզում տեսնել նաեւ Խանջյան փողոցի թիվ 35 շենքի 1-ին մուտքի բնակիչները: Եթե նրանք պատշգամբ դուրս գան, հիանալի համայնապատկեր կբացվի նրանց աչքերի առաջ: Բայց պատշգամբ դուրս չեն գալիս, թե ինչ է ինչ՝ պատշգամբները վթարային վիճակի մեջ են, հեռացել են պատից, թեքվել են ու քիչ է մնում փլվեն: Քիչ է մնում... Պիզայի աշտարակն էլ 500 տարի թեքված է, ի՞նչ է եղել... Փոխարենը որքա՛ն զբոսաշրջիկներ է

գրավում... Իսկ Խանջյան փողոցի թիվ 35 շենքը նույնիսկ Մպանդարյանի շրջավետի գործկոմի ուշադրությունը չի գրավում:

Որքան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, լավը ոչ միայն տեսնել, այլև լսել չի ուզում Մարգարյան փողոցի թիվ 18 տան բնակիչ Հ. Ավոյանը: Նա էլ բողոքում է, թե իր հեռախոսով հնարավոր չէ կապվել ոչ միայն 47, 61, 63, 64 եւ այլ կայանների, այլև հենց իրենց՝ 34 կայանի արձանատուների հետ: Բայց դա դեռ ոչինչ: Նա զայրացած հայտարարում է, թե հեռախոսի լսափողի միջից ռադիոյի հաղորդումներ է լսում: Ահա թե ուր կարող է հասցնել երախտամոռությունը: Ուրախանալու փոխարեն, որ անվճար ռադիո է լսում, նա... խոսում է:

Երախտամոռության, ավելի ճիշտ՝ ապերախտության, փայլուն օրինակ է տալիս նաև Երեւանի Հաղթանակ թաղամասի բնակիչ Սերգեյ Բարսեղյանը: Նա իր պատշգամբը սալապատելու նպատակով սալիկներ է գնում, որ արտադրվում են Երեւանի կերամիկական իրերի կոմբինատում: Հետո, երբ վարպետի հետ ուզում են իրար կողքի դնել սալիկները, պարզվում է, որ դրանք իրար չեն «բռնում»: Ինչո՞ւ, որովհետև եզրերը ծուռ են: Եւ Սերգեյ Բարսեղյանը հարցնում է՝ «Գուցե սխալվել են, գուցե սալիկների փոխարեն ափսեներ են վաճառել ինձ»: Եւ այստեղ արդեն ուզում էս բացականչել ինչի՞ց էք դժգոհ, հարգելի ընթերցող, գոհ չե՞ք, որ ափսեների տեր էք դարձել: Ի վերջո, եթե ձեռք չեք քաշել նախկին մտադրությունից, ուզած խանութից կարող էք ափսեներ գնել: Այդ ափսեներն այնքան հարթ են, որ դրանցով կարելի է հանգիստ սալապատել պատշգամբը: Ընդամենը մի քիչ հնարամտություն է պետք:

Չգիտես ինչու դժգոհ է նաև Կիրովականի Լենինի փողոցի թիվ 30 տան բնակիչ, պատերազմի եւ աշխատանքի վետերան Արամայիս Հարությունյանը: Եւ այն էլ ինչի՞ց: Թե նախկինում Կիրովականից երկու ավտոբուս էր գնում Թումանյանի շրջանի Լորուս գյուղ, սպասարկելով ծայրամասային հինգ գյուղերի բնակիչներին: Իսկ հիմա այդ երթուղին չի գործում: Եւ այսօր Կիրովականից, ասենք Ահնիձոր մեկնողները պետք է հասնեն Թումանյան բանավան եւ այնտեղ պատահական ավտոմեքենայի սպասեն:

Իսկապես որ անհանգիստ մարդիկ են այդ վետերանները: Մի հարցնող լինի, թե Ձե՞զ ինչ, հարգելի ընկեր Հարությունյան: Դուք տարվա մեջ միայն մեկ անգամ էք գնում այդ երթուղիով, ինչո՞ւ է այդ հարցը անհանգստացնում Ձեզ: Օրինակ վերցրեք, տեսնում էք էլի, թե ինչ աննախանձելի անտարբերությամբ եւ հանգստությամբ են այդ հարցին մոտենում Կիրովականի եւ Թումանյանի ավտոտնտեսությունների ընկերները: Աշխարհի ցավը Ձե՞զ են տվել:

Նույնն էլ Լենինականի Սեւյան փողոցի թիվ 4 տան բնակիչ Ա. Անտոնյանը: Հավանաբար անձնական ավտոմեքենա ունի կամ հերթագրված է, բայց բռնել ու ցավախառն հումորով գրել է, թե իսայտառակություն է տիրում քաղաքի թիվ 4, 41 եւ 42 երթուղիների ավտոբուսներում՝ հատկապես «Պիկ» ժամերին, թե իբր ավտոբուսից իջնող յուրաքանչյուր ուղևոր «ինչխ-որ շների զգվոտոցից մի կերպ փրկված, փախած էղնի»:

Իր հոգսը թողած, անձնական վիշտ է ապրում նաև Նաիրիի շրջանի Պոռոշյան ավանի բնակիչ Լ. Մուսայելյանը: Ավանի մուտքի եւ իրենց շենքի շրջակայքի անբարեկարգ վիճակի, աղբակույտերի վեր խոյացող բլուրների մասին խոսելու փոխարեն նամակ է գրել, թե ավանի

բուժական նոր տեղամասը շտապ օգնության կարիք ունի: Որովհետև նորակառույց տեղամասը քանդվում է արդեն, կոյուղին չի գործում, թափվում է ծեփը, շենքը ոչ էլեկտրաէներգիա է ստանում, ոչ ջեռուցում ունի, ոչ հեռախոս, եւ նույնիսկ սեղաններ չունի, որոնց վրա բժիշկները գրեն իրենց բողոք-դիմումները՝ ուղղված շրջանի ղեկավարներին:

Նամակների այս փնջի մեջ առանձնանում է երեւանցի Վ. Նավասարդյանի նամակը: Նա գրում է, թե Երեւանի հրուշակեղենի-մակարոնի կոմբինատում արտադրվող «Ոսկե բանալի» կոնֆետի փաթեթներն այնքան անորակ են ու տհաճ, որ հասկանալ չի լինում՝ դրանց վրա «Զուլտոյ բանալի» է գրված, թե՞ «Ոսկե կլյուչիկ»: Արդեն քիչ է մնում բարկանաս, ասես, եղբայր, ի վերջո ի՞նչ նշանակություն ունի, թե վրան ինչ է գրված, ձեռքն մի նայեք, բովանդակությանը նայեք: Մա էլ հո մանկական կատակերգը չեղա՞վ, որն ասում է՝ «թղթերն ուտենք, կոնֆետները շպրտենք»: Բայց վերջում պարզվում է, որ նամակի հեղինակն ավելի դաժան է. նա առաջարկում է եւ թղթերը դեն նետել, եւ պարունակությունը: Որովհետև երկուսն էլ նույն, ցածր մակարդակի են:

Գրելով այս ամենի մասին, տարակուսում ենք, արդյոք մեր նամակագիրների բարձրացրած հարցերը տեղ կհասնեն՝... գոնե այն օրը, երբ սովետա-ամերիկյան համատեղ թոփչքի մասնակիցները կհասնեն Մարս:

Իրոք՝ «Հոգսը ծով է, լուծողն ո՞վ է...»: